ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«11» հոկտեմբեր 2017 թվականի №87-Հ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 28-ի արձանագրությունը և ընկերության կողմից խախտումների չվերացման մասին 2017 թվականի փետրվարի 16-ի և 2017 թվականի մարտի 27-ի գրությունները.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Դադարեցնել «Վարդաշենի հանք» ՍՊԸ-ին տրամադրված ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի (Վարդաշեն) բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը: Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՇԱԹՎ-29/047 թույլտվությունը, 2012 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼՎ-047 լեռնահատկացման ակտը և լուծել 2012 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՊՎ-047 ընդերքօգտագործման պայմանագիրը:
2. Ընդերքի գործակալության պետին.

   Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին սահմանված կարգով ծանուցել «Վարդաշենի հանք» ՍՊԸ-ին, տեղեկացնել ՀՀ բնապահպանության նախարարությանը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին և ապահովել ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման գրանցամատյանում սույն տեղեկատվության գրանցումը:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ